

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆՔ ՃԵՄԱՐԱՆՔ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Շեմարանի Մայր Ռժուռոյս Սրբոյ Լջմիածնի կատարին մի անգամ և եթի տարւո՞ և այն աւուրբք ինչ յառաջ քան զակիզբեն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն Շեմարանիս մատուցեն խնդիր յանուն Ահափառ կաթուղիկոսին, ոչ անագան քան զմին Յուլիս ամսոյ:

3. Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մլրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զննին ի բժշկէ Շեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առունին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Շեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Շեմարանիս. իսկ վասն մտանելոյ յՇուաջին լսարան՝ ենթարկեացին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարեւոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Տանօլու-նէ-ն. Ա ամս մտանելոյ յԳ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երեւան եկեղեցական ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ իմիւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Ահափառ կաթուղիկոսէն, ի պէտս նէմական դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յառաջին լսարան

Ճ'եմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, ենէ զին առաջարկան անյետ իցէ է վերայ առաջարկ և ան դա՞մ չէ:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յՈւսումնական խորհրդոյն:

Մասնաւունեւն. Պահանջի՝ զի ընկալեալքն յաշակերտութիւն՝ լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9. յԳ. դասարան Ճ'եմարանին ընկալեալ լիցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանա:

10. Ըշակերտք Ճ'եմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակատուքն, որք ստանան զուառումն, մնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամն:

11. Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Ս'այր Աթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Ա. Եհափառ կաթուղիկոսի:

12. Ծշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկօյս կովկասեանք 50 ըուբլիս, իսկ եկեալքն յայլոց վեճակաց Ո.ուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ըուբլիս 75, որպէս զի հատուցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղենաց և այլոց իրեղինաց:

13. Խրաբանչիւր թոշակատու վճարեսցէ ի տարին ըուբլիս 200, ի կրկին նուազս. ի Սեպտեմբեր և ի Յունուար ամիսա:

14. Եթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակիցի մինչչե բոլորեալ ուսումնական կիսամեկին, գրաւական նորա ոչ դարձուացի յետս:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց: